ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 20 ապրիլի 2010թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Քննության առնելով «Հանրապետություն» կուսակցության դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. «Հանրապետություն» կուսակցությունը ՀՀ սահմանադրական դատարան է դիմել 01.04.2010թ:

2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում խնդրել է «ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել ՀՀ 1998 թվականի օգոստոսի 7-ի քաղաքացիական դատավարության ՀՕ-247 օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի, 22-րդ հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները՝ ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացնելու մասով»:

3. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետեւյալին.

Դիմողը նշում է, որ Հայաստանում գործել է ինչպես ինքնաբացարկի, այնպես էլ դատավորին բացարկ հայտնելու ինստիտուտը: Բացարկման հիմքերի առկայության պարագայում, երբ դրանք բացահայտում էր դատավորը, կայացնում էր ինքնաբացարկի մասին որոշում, իսկ դատավարության մասնակիցների կողմից հայտնված բացարկը քննում էր դատարանի նախագահը կամ մեկ այլ դատավոր: 28.11.2007 թվականին օրենսդրական

փոփոխությունների հետեւանքով վերացվեց դատավորին բացարկ հայտնելու ինստիտուտը: Ներմուծվեց դատավորին ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելու ինստիտուտը, որի դեպքում դրա քննությունը դրվեց հենց նույն դատավորի վրա:

Դիմողի կարծիքով՝ դատավորը չի կարող անկողմնակալ կերպով լուծել իր անկողմնակալության վերաբերյալ հարցը, եթե նա իրոք շահագրգռված է գործի ելքով կամ կան նրա օբյեկտիվության, արդարության եւ օրենքի հիման վրա գործը լուծելու վերաբերյալ կասկած հարուցող այլ հանգամանքներ: Բացի այդ, սեփական անկողմնակալության վերաբերյալ հարցը քննելիս անկողմնակալ չլինելուն նպաստում է այն հանգամանքը, որ միջնորդության վերաբերյալ կայացված որոշումն առանձին բողոքարկման ենթակա չէ:

Ըստ դիմողի՝ առկա է համահիրավական արգելք, ըստ որի անարդյունավետ է գանգատն ուղարկել ըստ էության քննության այն անձին՝ ում գործողությունները կամ անգործությունը բողոքարկվում է, քանզի խնդրի այսպիսի լուծումը բողոքարկումը դարձնում է անիմաստ:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթներն ինքնաբացարկի «օբյեկտիվ» հիմքով միջնորդության մասին հարցը քննելիս, սկզբունքորեն այլ լուծում չեն ենթադրում, քան միջնորդության մերժումը:

4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 22-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ վերոնշյալ դրույթներն ուղղակիորեն վկայակոչված չեն փվյալ գործով վերջնական դատական ակտ հանդիսացող՝ վարչական դատարանի 02.10.2009 թվականի ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշման մեջ:

Սակայն ՀՀ սահմանադրական դատարանը 2008թ. ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ իրավական դիրքորոշում է հայտնել «օրենքի դրույթի կիրառում» հասկացության վերաբերյալ՝ ընդգծելով, որ դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի վկայակոչումը կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ:

Քանի որ, դիմողի համար որպես ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավական հիմք ծառայել են քաղաքացիական դատավարության օրենսգրքի հենց վերոնշյալ դրույթները: Այսինքն, փվյալ դեպքում ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավական գործընթացի իրավական հիմքը վերոնշյալ դրույթներն են. ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդությունը քննության է առնվել եւ լուծվել իրավական այն հնարավորության հիման վրա, որն ընձեռել են խնդրո առարկա դրույթները:

Ուստի, քանի որ.

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում ,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը.

ՈՐՈՇԵՑ

«Հանրապետություն» կուսակցության դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի, 22-րդ հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները՝ ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացնելու մասով՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործն ընդունել քննության եւ որպես պատասխանող կողմ ներգրավվել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

20 ապրիլի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-11